



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում

Մամուլի և տեղեկատվության բաժին

Ք. Երևան, 25 հուլիսի 2013թ

Բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի և հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի համատեղ հայտարարությունը Հայաստանի հետ ապագա Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների ավարտի վերաբերյալ

Եվրոպական արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության Բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնն ու Ընդլայնման ու Եվրոպական հարևանության քաղաքականության ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն այսօր հանդես եկել հետևյալ հայտարարությամբ

«Ուրախությամբ ենք հաստատում, որ նախօրեին Երևանում ավարտվեցին ԵՄ-ն և Հայաստանի միջև ապագա Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, ինչպես նաև կողմերը համաձայնության եկան Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) հաստատման վերաբերյալ:

Ակնկալում ենք, որ այս դրական զարգացմանը կհետևի Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումը, որը տեղի է ունենալու Արևելյան գործընկերության հաջորդ գագաթաժողովի ընթացքում, ս.թ. նոյեմբերի 29-ին Վիլնյուսում, այնուհետև, տեխնիկական ընթացակարգերն ավարտելուն պես կհետևի համաձայնագրի ստորագրումը:

2010 թվականից մեկնարկած այս բանակցային գործընթացի ավարտը լուրջ ձեռքբերում է թե՛ Եվրոպական միության, և թե՛ Հայաստանի համար: Ասոցացման համաձայնագիրը Հայաստանին և Եվրոպական միությանը հնարավորություն կտա համատեղ ուժերով առաջ մղել արդիականացման և բարեփոխումների մի ընդգրկուն ծրագիր՝ հիմնված ընդհանուր արժեքները, քաղաքական ասոցացումն ու տնտեսական ինտեգրման վրա: Համաձայնագիրը անմիջական դրական ազդեցություն կունենա առօրյա կյանքի համար և Հայաստանն ու քաղաքացիներին ավելի մոտ կդարձնի Եվրոպային: Մեր գոհունակությունն ենք հայտնում բանակցող կողմերի բոլոր մասնակիցներին նման գերազանց արդյունք արձանագրելու կապակցությամբ»: